Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
պարոն Արկադի Խաչատրյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձիք**

*Մարինե Սարիբեկյան* — շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Այցելություն Վրաստանի Հանրապետություն, ք. Թբիլիսի՝ 2023 թվականի հուլիսի 11-14-ը

3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

Ասիական զարգացման բանկ (ADB)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «Կլիմայական լուծումների բացահայտում» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

✓ Մոդուլ 1 - Համալիր կլիմայական քաղաքականություն.
- անցում ցածրածխածնային ռեժիմի,
- արդար անցում,
- Ազգային սահմանված գործողություններ (NDC):

✓ Մոդուլ 2 – Երկարաժամկետ ռազմավարություն (LTS).
- երկարաժամկետ ռազմավարության (LTS) նախապատրաստում և ներդնում,

- կլիմայի ազդեցության հետևանքների մեղմման պլանավորման մեջ հարմարվողականության և կայունության ինտեգրում,
- երկարաժամկետ ռազմավարության (LTS) վերափոխումը հնարավորությունների:

✓ Մոդուլ 3 – Կլիմայական ռիսկերի կառավարում, հարմարվողականություն և կայունություն նրանց նկատմամբ.
- կլիմայական ռիսկերի ազդեցությունը զարգացման վրա,
- կլիմայական ռիսկերի կառավարման կայունության համակարգերի բարելավում,
- Ասիական զարգացման բանկի աջակցությունը կլիմայի փոփոխության հարմարվողականության կայունության բարձրացման գործում:

✓ Մոդուլ 4 – Կլիմայական ֆինանսավորման սահմանում և հետևում.
- կլիմայական ֆինանսավորման ընդհանուր ճարտարապետությունը,
- հարմարվողականություն և մեղմման միջոցառումների ֆինանսավորումը:

✓ Մոդուլ 5 – Մասնավոր հատվածի ներդրումների արագացում.
- մասնավոր հատվածի նախապատմություն, սահմանում և մասնակցության հիմնական ուղիները,
- մասնավոր հատվածի ներդրումների հիմնական խոչընդոտները և վերջիններիս արագացման որոշումները:

✓ Մոդուլ 6 – Փարիզյան համաձայնգիր.
- կլիմայի փոփոխության ընթացիկ ծրագրեր և ռեգիոնալ համագործակցություն,
- Ասիական զարգացման բանկի կլիմայի փոփոխության ռազմավարությունը Կենտրոնական և Արևմտյան Ասիայի երկրների համար:

## 6. Հանդիպումները, ելույթները.

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղրղստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Պակիստանի և Ասիական զարգացման բանկի փորձագետներ և ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հրավիրված էին 70 ներկայացուցիչ: Հայաստանից հանդիպմանը մասնակցում էին շրջակա միջավայրի, ֆինանսների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներ (ընդհանուր առմամբ՝ 7 ներկայացուցիչ):

Հանդիպման չորս օրերի ընթացքում երկրների ներկայացուցիչներին տրվում էին հանձնարարականներ և երկրները հերթով ներկայացնում էին արդյունքները, իրենց տեսակետը ներկայացված հարցադրումների վերաբերյալ: Բոլոր օրերի ընթացքում անցկացվում էին ինտերակտիվ խաղեր կլիմայի փոփոխության գիտելիքների վերաբերյալ և Հայաստանի ներկայացուցչությունն առաջադեմ էր բոլոր երկրներից՝ ստանալով հինգ նախատեսված մրցանակներից երեքը:

**7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Երկրների ներկայացուցիչները փոխանակվում էին փորձով և մասնվորապես՝ Հայաստանի ներկայացուցչությանը խնդրում էին կիսվել իր լավագույն փորձով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակից երկրներից միայն Հայաստանն ունի Կառավարության կողմից հաստատված Հարմարվողականության ազգային ծրագիր:
Հանդիպման վերջին օրը մասնակիցներին հանձնվեցին վկայականներ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ձեռք բերվեց նոր գիտելիքներ և փորձ թե ինչպես երկրները բացահայտեն իրենց առաջնահերթությունները, ինչպես հասնեն իրենց կլիմայական գլոբալ նպատակներին, ինչպես գտնեն ֆինանսավորում դրանց իրականացման համար, ինչպես ներգրավեն մասնավոր հատվածին ներդրումներ կատարել և ինչպես դիմել Ասիական զարգացման բանկին աջակցության համար:

*Գործուղվող՝* *Մարինե Սարիբեկյան*

*18.07.2023 թ.*